Ռոմանոս Թագաւորեաց ամս Ի. ոմանք զՌոմանոս յառաջ՝ ասեն՝ քան զԿոստանդին։ Սա հալածեաց զամենայն կարգաւորսն Հայոց՝ որ էին յիշխանութեանն Հռոմոց. որք եկեալ յաշխարհս Հայոց՝ շինեցին վանորայս և բնակեցան անդ. որոց ասի Կարմնճաձոր և Կապուտքար և Հոռոմոսի վանք 'ի Շիրակ գաւառի։ Սա արար խաղաղութիւն ընդ Պուլղարս, և դադարեաց մարտն արևմտից. պարապեցին և յարևելս, և առին զԿարին և զԿամախ։ Յաւուրս սորա Ապաս՝ որդի Սմբատայ՝ շինէ 'ի Կարս զԱստուածածնակ տաճարն զԿաթուղիկէն հրաշազան յօրինւածովք 'ի թուին Քրիստոսի ՋԼՌ։

Կոստանդիանոս Լեոն Թագաւորեաց ամս ԺԶ։ Յաւուրս սորա տարան զդաստառակն Քրիստոսի յՈւրհայոյ 'ի Ստամպօլ քաղաք Կոստանդնի Թագաւորութեան, և եղբայր նորա Վասիլ զօրապետ նորա՝ ընդ դէմ Տաճկաց յերկար

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան